Բաշկորտոստանում ազգայնականությունը գլուխ է բարձրացնում

ԱՌՎԱԿ կենտրոնի մեկնաբանությունը, 25.01.2024թ.

ՌԴ Բայմակ քաղաքի դատարանի կողմից 2024 թ. հունվարի 17-ին բաշկիր ակտիվիստ Ֆաիլ Ալչինովի նկատմամբ կայացված դատավճիռը անկարգությունների է հանգեցրել Բաշկորտոստանում: Դեռևս 2023 թ. ապրիլի 28-ին Ալչինովը Իշմուրզինո գյուղի մշակույթի տան մոտ քաղաքացիների հավաքի ժամանակ ելույթ էր ունեցել բացասաբար արտահայտվելով *«հայերի, կովկասյան ազգությունների և Կենտրոնական Ասիայի ազգայնականների»* վերաբերյալ, որոնց նա նաև անվանեց «*կարա խալքկ»* (բաշկիրերեն՝ «*սև ժողովուրդ*»): Քննչական մարմինները, իսկ ավելի ուշ դատարանը Ալչինովի ելույթներում նշմարել է ազգամիջյան ատելություն հրահրելու նշաններ, և վերջինս մեղադրվել է ծայրահեղականության մեջ՝ դատապարտվելով 4 տարվա ազատազրկման ուղղիչ աշխատանքային գաղութում:

Դատավճռի օրը մի քանի հազար մարդ ամբողջ շրջանից հավաքվել էր Բայմակ քաղաքում: Ուժայիններն իրենց հերթին հսկողության տակ էին առել դատարանի մուտքերը: Դատավճռի հրապարակումից հետո ամբոխի մեջ անկարգություններ էին սկսվել, ոստիկանությունը դիմել էր ուժային գործողությունների, ներգրավվել էին հատուկ ջոկատայիններ: Անկարգությունների հետևանքով տուժածների թիվը հասել էր մի քանի տասնյակի, այդ թվում՝ անվտանգության ուժերից: Հանրահավաքի մի քանի մասնակիցներ ձերբակալվել էին, նրանց նկատմամբ քրեական գործեր էին հարուցվել:

ՌԴ-ում լրատվամիջոցներն ու վերլուծական շրջանակները նախընտրում են զգուշավոր կերպով մեկնաբանել Բայմակի իրադարձությունները կամ ընդհանրապես չխոսել դրանց մասին՝ միգուցե խուսափելով ակնհայտորեն միջէթնիկական ծագում ունեցող խնդրի լայն քննարկումից: Չնայած Ալչինովի պաշտպանների հավաստիացումներին, որ նրա ելույթները կրում էին բացառապես սոցիալ-բնապահպանական բնույթ և առնչվում էին Բաշկորտոստանի ոսկու հանքավայրերում «*միգրանտների աշխատուժի»* գերակայության խնդիրներին, քաղաքական գործիչները և լրագրողները չեն բացառում, որ դա կարող է սկիզբ տալ

դաշնության հիշյալ սուբյեկտում ավելի խորքային գործընթացների մեկնարկին: Ուստի քննարկումները հիմնականում ծավալվում են մարզի սոցիալական խնդիրների և հանրապետության իշխանությունների վարչարարական թերությունների շուրջ:

Հանրապետության ղեկավար Ռադիյ Խաբիրովն ավելի անկեղծ է խնդրի շուրջ իր գնահատականներում և բացահայտ հայտարարում է, որ խոսքը Բաշկորտոստանը ներսից պայթեցնելու և այն Ռուսաստանի կազմից անջատելու մասին է: Խաբիրովը չի հերքում հանրապետության իշխանությունների որոշակի մեղքը և չի թաքցնում, որ այստեղ սոցիալ-տնտեսական կյանքը լավագույն մակարդակի վրա չէ, բայց, միաժամանակ պնդում է, որ խնդրո արմատը պետք է բոլորովին այլ տեղ փնտրել: Նա խոստովանում է, որ *«կարելի է բարի բնապահպան-ակտիվիստի, հայրենասերի դիմակ հագնել (նկատի ունի Ալչինովին), բայց իրականում իրավիճակը բոլորովին էլ այդպիսին չէ»*: *«Իմ առաջին իսկ աշխատանքային օրվանից ես ասել եմ, որ չեմ հանդուրժի ծայրահեղականությունը և իրավիճակը խարխլելու փորձերը: Որպես Բաշկորտոստանի ղեկավար՝ ես պետք է պաշտպանեմ հանրապետությունը և ժողովրդին՝ ազգային պատկանելության, լեզվի և հավատքի հիման վրա ազգամիջյան ներդաշնակությունը սասանելու ցանկացած փորձից...»*:

Նա ուղղակիորեն հայտարարել է, որ 2020 թ. ՌԴ-ում ծայրահեղական ճանաչված «Բաշկորթ» ազգայնական կազմակերպությունը ներգրավված է եղել անկարգությունների մեջ. «*Այդ մարդկանցից ոմանք գտնվում են արտերկրում և, ըստ էության, հանդես են գալիս որպես դավաճաններ՝ Ռուսաստանից Բաշկորտոստանի անջատման և պարտիզանական պատերազմի կոչեր հնչեցնելով*»:

Նման կարծիք է հայտնում Պետդումայի նախկին պատգամավոր Իլյա Պոնոմարյովը, որն, ընդսմին, պնդում է, որ Մոսկվայի հովանավորյալ Խաբիրովը չի կարողանա հանգստացնել իրավիճակը: Ավելին, ըստ Պոնոմարյովի, անկարգությունները կարող են տարածվել դեպի Յակուտիա և Տիվա, որտեղ ազգայնական տրամադրությունները աճում են, և որտեղ մարդիկ ավելի քիչ կախվածություն են զգում Մոսկվայից:

Խաբիրովի և Պոնոմարյովի խոսքերից կարելի է եզրակացնել, որ, ամենայն հավանականությամբ, խոսքը թյուրքական ազգայնականության մասին է, և *«արտերկրում են»* արտահայտությունը գրեթե ուղղակիորեն

մատնանշում է Թուրքիային՝ «Բաշկորտ» ազգայնական կազմակերպության հովանավորին և գաղափարական ոգեշնչողին։

Հատկանշական է, որ Բայմակի դատարանի կողմից դատապարտված Ֆաիլ Ալչինովն իր ելույթներում՝ որպես երկրամասում ստեղծված բարդ բնապահպանական և սոցիալական իրավիճակի մեղավորներ, առանձնացրել է հայերին, իսկ մնացածին բնորոշել որպես «սև ժողովուրդ»՝ տալով լղոզված, անորոշ ձևակերպումներ *«կովկասյան ազգությունների և Միջին Ասիայի ազգությունների ներկայացուցիչներ»։*

Այս դեպքում հռետորաբանությունը և շեշտադրումները ուղղակիորեն մատնանշում են Բաշկորտոստանում «*սոցիալ-բնապահպանական գործողությունների»* և դրան հաջորդած անկարգությունների հիմնական պատվիրատուին։